Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-271-25.05.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում՝

1) «ա» ենթակետը «այն է՝» բառերից հետո լրացնել «Վճռաբեկ դատարանի դատավորի (այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի նախագահի և պալատի նախագահի) պաշտոն զբաղեցնելու, » բառերով.

2) «բ» ենթակետը «այն է՝» բառերից հետո լրացնել «Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի և դատավորի պաշտոն զբաղեցնելու, » բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասը «պահանջող» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի և դատավորի, Վճռաբեկ դատարանի դատավորի (այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի նախագահի և պալատի նախագահի)» բառերով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը «չափը» բառից հետո լրացնել «, բացառությամբ Սահմանադրական դատարանի նախագահին, փոխնախագահին և դատավորին վճարվող հավելավճարներից,» բառերով:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը «պահանջող» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի դատավորի (այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի նախագահի և պալատի նախագահի)» բառերով:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 12. Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի և դատավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող հավելավճարը**

1. Սահմանադրական դատարանի նախագահին, փոխնախագահին և դատավորին վճարվում է հավելավճար՝ պաշտոնային դրույքաչափի 80 տոկոսի չափով:»:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) վերնագրում «հավելավճարները» բառից հետո լրացնել «և հավելումները» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Վճռաբեկ դատարանի դատավորներին (այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի նախագահին և պալատի նախագահին) սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով:»:

Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի և դատավորի համար հաշվարկող հավելավճարը ներառվում է սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված՝ վճարման ենթակա հավելավճարի մեջ: